ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի փետրվարի 28-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 12.01.2023, N 4 (7895)) **կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիանա Հայկազի Գրիգորյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2023 թվականի հունվարի 12-ի N 4 (7895) համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2023 թվականի հունվարի 25-ին ռեկտորին դիմում է ներկայացրել կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիանա Հայկազի Գրիգորյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց. Լ.Հ.Գրիգորյանը ծնվել է 1968 թվականի մարտի 10-ին Երևանում: 1985 թվականին ոսկե մեդալով ավարտել է Երևանի N 77 միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ ((ԵրԺՏԻ), ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) և գերազանցության դիպլոմով ավարտել է հիշյալ ինստիտուտի լրիվ դասընթացը «Աշխատանքի էկոնոմիկա» մասնագիտությամբ և նրան տրվել է տնտեսագետի որակավորում: 1991 թվականին նա ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի արտադրությունից կտրված ասպիրանտուրա «Քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ և 1994 թվականին ազատվել է ասպիրանտուրայից ժամկետը լրանալու կապակցությամբ:

2001 թվականին Լ.Հ.Գրիգորյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2003 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2015 թվականին Լ.Հ.Գրիգորյանը պաշտպանել է «Ներդրումային գործունեության ռիսկերի վերլուծության և կառավարման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» թեմայով դոկտորական ատենախոսությունը և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2018 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2015 թվականից Լ.Հ.Գրիգորյանը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդի անդամ է: 2018-2020 թթ. եղել է 014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար: 2022 թվականից նա Երևանի պետական համալսարանում գործող տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի անդամ է: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատվել է 7 թեկնածուական ատենախոսություն: Լ.Հ.Գրիգորյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 75 է (7 ուսումնական ձեռնարկ, որից 6-ը՝ համահեղինակությամբ, 2 մենագրություն, 66 գիտական հոդված, որից 1-ը՝ Scopus շտեմարանում ընդգրկված գիտական ամսագրում, 49-ը՝ հայկական գիտական ամսագրերում (այդ թվում 3-ը՝ անգլերենով), 16-ը՝ միջազգային գիտական ամսագրերում (այդ թվում 9-ը՝ ռուսական, 5-ը՝ վրացական, 2-ը՝ ուկրաինական)):

Աշխատանքային գործունեությունը: 1994 թվականի դեկտեմբերի 28-ից առ այսօր Լ.Հ.Գրիգորյանը աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 28.12.1994 - 29.12.2003՝ հաշվապահական հաշվառման և տնտեսական գործունեության ամբիոնում՝ ասիստենտ (1997 թվականին ամբիոնը վերանվանվել է հաշվապահական հաշվառում և աուդիտ), 29.12.2003 -

29.08.2011՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ (2010 թվականին ամբիոնը վերանվանվել է կառավարչական հաշվառում և աուդիտ), 29.08.2011 - 03.07.2012՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, 03.07.2012 - 03.07.2017՝ նույն ամբիոնի վարիչ՝ մրցույթով ընտրվելու կապակցությամբ, 03.07.2018 - 05.03.2018՝ նույն ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 2018 թվականի մարտի 5-ից՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ՝ մրցույթով ընտրվելու կապակցությամբ: Այդ տարիների ընթացքում իրականացրել է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն՝ վարելով բարձրորակ դասախոսություններ և գործնական պարապմունքներ ինչպես բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, այնպես էլ ասպիրանտների համար: Մինչ ասպիրանտուրա ընդունվելը՝ 18.10.1989 - 18.10.1991 Լ.Հ.Գրիգորյանը աշխատել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) քաղաքատնտեսության ամբիոնում որպես սովորող-հետազոտող: 1989-1992 թթ. նա աշխատել է Երևանի թեթև արդյունաբերության տեխնիկումում որպես դասախոս:

Լ.Հ.Գրիգորյանը վերապատրաստման դասընթաց է անցել Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում: 2017 թվականի մայիսին նա մասնակցել է Վիեննայում Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Կրթության միջազգային ստանդարտների սահմանման և մշակման բարձրացման ռազմավարությունը» թեմայով աշխատաժողովին: 2018 թվականին STAREP ծրագրի շրջանակում Լ.Հ.Գրիգորյանը Վիեննայում մասնակցել է «Կարողությունների հիմքով հաշվապահական կրթության կազմակերպումը. ռազմավարությունը և գործիքներ» թեմայով աշխատաժողովին, 2020 թվականին՝ Բաթումիում ACCA-ի (Որակավորման հավաստագրված հաշվապահների ասոցիացիա) կողմից կազմակերպված «Հանրային հատվածի հաշվապահության միջազգային ստանդարտները» թեմայով վերապատրաստողների պատրաստման դասընթացին, 2022 թվականի նոյեմբերին՝ PULSAR և STAREP ծրագրերի շրջանակներում «Կրթության միջազգային ստանդարտների վերջին թարմացումները» թեմայով աշխատաժողովին:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի 2023 թվականի փետրվարի 16-ի նիստում (արձանագրություն N 8) քննարկվել է կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Լ.Հ.Գրիգորյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական

բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Լ.Հ.Գրիգորյանը ներկայացրել է կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել ամբիոնի պրոֆեսոր Ա.Գ.Ճուղուրյանը, դոցենտներ Ա.Հ.Սարդարյանը, Ս.Ծ.Ղազարյանը, ավագ դասախոս Կ.Ա.Առաքելյանը, դասախոսներ Դ.Ս.Մինասյանը, Գ.Գ.Արաբյանը: Նրանք նշել են, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պահանջներին, ճանաչված մասնագետ է, աչքի է ընկնում բարձր պրոֆեսիոնալիզմով և կազմակերպչական հմտություններով: Նաև նշել են, որ Լ.Հ.Գրիգորյանի պաշտոնավարման նախորդ տարիների ընթացքում ամբիոնը գրանցել է կայուն առաջընթաց, որի ապացույցն է մեծ թվով մագիստրանտների ներգրավումը, ամբիոնի շրջանավարտների և համակազմի մասնագիտական ձեռքբերումները: Նա օժտված է մարդկային բարձր որակներով և վայելում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների սերն ու հարգանքը: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկությանը չի մասնակցել Լ.Հ.Գրիգորյանը) կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնը երաշխավորել է Լ.Հ.Գրիգորյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 22-ի նիստում (արձանագրություն N 13): Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքով ելույթ է ունեցել դոցենտ Մ.Վ.Բաղալյանը: Նա հատուկ ընդգծել է, որ Լ.Հ.Գրիգորյանը մասնագիտական և մարդկային բարձր արժանիքներով օժտված գիտնական է ու լավ ընկեր: Ելույթից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է մրցութային հանձնաժողովի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիանա Հայկազի Գրիգորյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի

քվեարկությանը՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

Զեկուցողներից հետո Լիանա Հայկազի Գրիգորյանը ներկայացրեց կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Մ.Վ.Բաղալյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիանա Հայկազի Գրիգորյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 52-ը. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 35-րդ կետը, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 52, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիանա Հայկազի Գրիգորյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան